ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«19» դեկտեմբերի, 2013թ. ք. Երևան

«Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» 10-րդ ամենամյա հանրապետական գիտաժողով

Տաս տարի անընդմեջ շարունակելով նպաստել փաստաբանության ոլորտում իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակի բարձրացմանը և ինքնուրույն հետազոտություններ կատարելուն, այս տարի ևս Հայաստանի իրավաբանական հիմնադրամը, «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը և Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան կազմակերպել են ավանդույթ դարձած «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» 10-րդ ամենամյա հանրապետական գիտաժողովը: Գիտաժողովի այս տարվա խորագիրն է. «Իրավաբանական ընկերություններ. Հայաստանի և արտասահմանի փորձը, զարգացման միտումները»: Գիտաժողովի եզրափակիչ՝ բանավոր փուլը տեղի կունենա սույն թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 11:00-ին, «Գոլդեն Թուլիփ Երևան» հյուրանոցում:

Կարևորելով իրավաբան ուսանողների մասնակցության ապահովումը փաստաբանական ինստիտուտի կայացման գործընթացում, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում, ինչպես նաև արդարադատության ոլորտում իրավաբանական ընկերությունների զարգացման անհրաժեշտությունը, կազմակերպիչները իրենց գործունեության ընթացքում մեծ տեղ են հատկացնում մասնագիտական գիտաժողովների կազմակերպմանն ու անցկացմանը:

Գիտաժողովը անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Այս տարի մասնակցության հայտ են ներկայացրել 30 իրավաբան ուսանողներ՝ Երևանից և ՀՀ մարզերի իրավաբանական բուհերից և բուհերի իրավաբանական ֆակուտետներից: Նրանցից միայն 15-ն է աշխատանքը սահմանված ժամկետներում ներկայացրել: Գրավոր փուլում առավելագույն միավորներ ստացած 5 մասնակիցներն անցել են 2-րդ փուլ:

Գիտաժողովի գրավոր փուլին մասնակցեցին սահմանված ժամկետներում կազմակերպիչներին իրենց զեկույցները ներկայացրած 15 իրավաբան ուսանողներ: Ներկայացված 5 լավագույն աշխատանքների հեղինակները իրավունք են ստացել մասնակցել բանավոր փուլին, որի ընթացքում հանդես եկան իրենց զեկույցներով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել գիտաժողովի կազմակերպիչներին՝ աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ.՝ 568788; ֆաքս՝ 580299; հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2; վեբ կայք՝ www. lawfoundation.am; էլ. փոստ՝ lawfound@gmail.com: